




ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Ա. Մինասյան Ա. ՄԻՆԱՍՅԱՆ



«19» 12 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 117

Ձեռնարկողը՝

<<Միլենիում Կոնստրակշեն>> ՍՊԸ
Ք. Երևան, Տերյան 5

Գործունեությունը՝

Երևան քաղաքի, Կենտրոն վարչական շրջանի Տերյան փողոց 5 հասցեում նախատեսվող համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Վ. Սահակյան

Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 117

«19» 12 2017թ.

Այսպես
գրեմք
22/12/17

<<Միլենիում Կոնտրակշեն>> ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի, Կենտրոն վարչական շրջանի Տերյան փողոց 5 հասցեում նախատեսվող հյուրանոցային համալիրի կառուցման նախնական գնահատման հայտ

Պատվիրատու՝	“Միլենիում Կոնտրակշեն” ՍՊԸ
Նախագծող՝	“Արխանգել” ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ, Նախնական գնահատման հայտ;
Տեղադրման վայրը՝	Ք. Երևան, Կենտրոն վարչական շրջանի Տերյան փողոց 5
Գործունեության կատեգորիան	/Գ/ կատեգորիա

Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի <<Միլենիում Կոնտրակշեն>> ՍՊ ընկերությունը Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Տերյան փողոց 5 հասցեում նախատեսում է կառուցել հյուրանոցային համալիր:

Նախատեսվող հյուրանոցային համալիրը գտնվում է Երևան քաղաքի Կենտրոն համայնքի վարչական շրջանում՝ Տերյան փողոց 5 հասցեում՝ Պուշկին և Տերյան փողոցների խաչմերուկին կից: Հարևանությամբ գտնվում են բնակելի բազմահարկ շենքեր, առևտրի և հասարակական սպասարկման շինություններ: Կից հողամասերն են՝ Պուշկին և Տերյան փողոցները, հարևանությամբ գտնվող շենքեր-շինությունները: Երևան քաղաքի Տերյան 5 հասցեում նախատեսվող հյուրանոցային համալիրի կառուցման աշխատանքային նախագծի համար հիմք են հանդիսացել՝ 03.05.16թ. երևանի քաղաքապետարանի կողից տրված թիվ 01/18-07/2-36312-321 ճարտարապետահատակագծային առաջադրանքը, կառուցապատողի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման՝ թիվ 03062016-01-0208 վկայականը, էսքիզային նախագիծը: Նախագիծն իրականացվել է առաջադրանքի պահանջների և շինարարական նորմերի պահանջներին համապատասխան: Նախագծային աշխատանքները կատարվում է “Արխանգել” ՍՊԸ մասնագետների կողմից /լիցենզիա՝ 15546, տրված 30 հոկտեմբերի 2012թ./:



Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 1961 քմ, որից կառուցապատման մակերեսը՝ 1849 քմ, իսկ 112 քմ մակերեսում, հարակից տարածքներում նախատեսված է բարեկարգման աշխատանքներ: Բարեկարգման աշխատանքները ներկայացված են բետոնյա սալվածքների տեսքով և ասֆալտապատ հարթակների մակերեսներով:

Հողամասը գտնվում է հասարակական կառուցապատման գոտում և բաղկացած է 3 մասից՝ համապատասխանաբար 0.140096հա /սեփականություն/, 0.028308հա /հողամասի կառուցապատման իրավունք/ և 0.027718հա /հողամասի կառուցապատման իրավունք/:

Հողամասը կառուցապատվում է մինչև 100%: 1850 քմ կառուցապատման մակերեսից 1215քմ-ը վերգետնյա է: Համալիրն իրենից ներկայացնում է՝ 23.45x49.30մ ուղանկյուն հատակագծով, խորանարդատիպ կառույց: Այն ունի 4 ստորգետնյա և 22 վերգետնյա հարկեր՝ 24756 քմ ընդհանուր մակերեսով և 78.35 վերին նիշով: Ստորգետնյա հարկերում նախատեսվում են ավտոկայանատեղ 111 ավտոմեքենայի համար և տեխնիկական սենքեր՝ 6160 քմ մակերեսով:

Վերգետնյա հարկերում, տեղակայված են 10 հյուրանոցի հարկեր - 7690քմ, 11 բնակելի հարկեր-9096քմ, մեկ տեխնիկական հարկ եվ տանիքի բաց հարթակ - 1810քմ:

Շենքը նախատեսվում է կառուցել երկաթբետոնյա կարկասով՝ ըստ բարձրության հիմնակմախքի աստիճանաբար թեթևացմամբ: Լուսամուտային բացվածքներն իրականացված են արտաքին ե.բ. պատերի/դիաֆրագմաների/ մեջ:

Արտաքին պատերը նախատեսվում է ջերմամեկուսացնել 80 մմ ջերմամեկուսիչով և երեսապատել տրավերտինե սալերով:Ներքին պատերը ավտոկայանատեղիում, տեխնիկական և բնակելի հարկերում նախատեսվում են 100, 150, 200մմ բետոնե բլոկներով շար՝ հարդարված գիպսոնիտով, իսկ հյուրանոցային հարկերում նախատեսված է գիպսաստվարաթղթե պատեր եվ երեսապատում:

Տանիքի եվ 5.30 նիշի բաց հարթակի ջրահեռացումը նախատեսվում է իրականացնել ներքին համակարգով:

Նախագծով նախատեսված է արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ:

Կառույցում նախատեսված է նաև հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու անհրաժեշտ պայմաններ:

Կառույցի հիմնական ցուցանիշներն են՝

Հողամասի ընդհանուր մակերես՝ 1960 քմ

Հյուրանոցի կառուցապատման մակերես՝ 1850 քմ

Հյուրանոցի ընդհանուր մակերես՝ 24756.2 քմ

Հյուրանոցի ծավալ՝ 76606.7 խմ

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում մթնոլորտի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընացքում առաջացող արտանետումներով: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ:



Օդային ավազանի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով:

Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- շինարարական հրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- պարտադիր կարգով շինանյութերը, ավելցուկ գրունտը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- ստրուն նյութերը (ավազ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- շինարարական տեխնիկայի տեղաշարժը և աշխատանքը իրականացվելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը:
- բացառվելու է շինարարական աղբի և հողերի կուտակումները բուսածածկ տարածքներում:
- պարբերաբար իրականացվելու է տեխնիկայի շարժիչների կարգաբերում,
- չոր եղանակների ժամանակ իրականացվելու է խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատանքները իրականացվելու են ջրային ռեսուրսներից բավականին հեռավորության վրա, կարելի է եզրակացնել, որ թե շինարարության, և թե շահագործմանը ընթացքում որևէ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա չի լինի:

Հողածածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար,
- ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի ,
- բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր:
- շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

Եզրահանգում՝ Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է ժամանակավոր բնույթ: 2017թ նոյեմբերի 21-ին և դեկտեմբերի 12-ին նախատեսվող

գործունեության նախնական գնահատման հայտի վերաբերյալ կազմակերպվել են հասարակական լսումներ, որոնց արդյունքում կազմված արձանագրություններով մասնակիցները և ազդակիր համայնքը նախատեսվող գործունեության իրականացմանը տվել են իրենց հավանությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Միլենիում Կոնտրակշեն>> ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի, Կենտրոն վարչական շրջանի Տերյան փողոց 5 հասցեում նախատեսվող հյուրանոցային համալիրի կառուցման նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Սասնազեն



Ա. Սինասյան